ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 158 - Ա 09 մարտի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 245-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի դրույթներով

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ առանձին և միացյալ խորհուրդների ցանկն ու կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի ու հունիսի 18-ի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 245-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման N 2 հավելվածի 61-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար գյուղի միջնակարգ և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ավազան գյուղի հիմնական դպրոցների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում «Մխիթարյան Մխիթար Ռազմիկի /ԿԳՄՍ ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Զաքոյան Բաղիշ Գագիկի /ԿԳՄՍ ներկայացուցիչ/ բառերով:

09.03.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ